

ԾՐԱԳԻՐ

**«ԱՄԲՈՂՋ ԱՆՁԻ ՎՐԱ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԲՈՒԺՔՈՒՅՐԱԿԱՆ ԽՆԱՄՔ»
 ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐԻ**

Մայիսի 3-5, 2019թ., գ. Ախուրյան, Շիրակի մարզ («ԱՔՄԱ» կենտրոն)

«ԱՔՄԱ» բարեգործական հասարակական կազմակերպություն

Օր 1՝ մայիսի 3		
Նստաշրջան 1՝ Անձի ամբողջական խնամքը հաճախ հանդիպող շնչառական հիվանդությունների ժամանակ		
13:30-13:45	Դասախոսական թիմի և մասնակիցների ծանոթացում, ծրագրի նկարագիր և նպատակներ	
13:45-14:00	Մասնագիտական արժեքներ և ամօրիչ խնամքը բուժքույրական պրակտիկայում	Ջո Բլակեր
14:00-14:30	Անձի ամբողջական խնամքի սկզբունքները՝ կենտրոնացած ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և հոգևոր ասպեկտներում	Քեյթ Գերիշ
14:30-15:00	Կիրառել անձի ամբողջական խնամքի սկզբունքները շնչառական խնդիրներ ունեցող հիվանդների մոտ	Ջո Բլակեր
15:00-15:30	Ընդմիջում	
15:30-15:45	Շնչառական հիվանդությունների հաճախ հանդիպող ֆիզիոլոգիական ախտանիշերը: Շնչահեղձություն, կրծքավանդակի սեղմվածություն, հազ (չոր կամ խորխոկ), ցավ	Քեյթ Գերիշ
15:45-16:00	Շնչառական խնդրով հիվանդի գնահատումը՝ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական և հոգևոր ազդեցությունը	Քեյթ Գերիշ
16:00-16:15	Դեղորայքային կառավարումը շնչառական սիմպտոմների ժամանակ՝ խմելու դեղորայք, ինհալացիա, թթվածին	Քեյթ Գերիշ
16:15-17:15	Գործնական մաս Ոչ դեղորայքային կառավարումը շնչառական սիմպտոմների ժամանակ՝ շնչառության վերահսկողություն, շնչառության տեխնիկա,	Ջո Բլակեր, Ուենդի Ուեբբ

	<p>դիրք, միջավայր</p> <p>Դասախոս Զո Բլակերը ցուցադրելու է այն հմտությունները, որոնք պահանջվում են շնչառական խնդիրներով հիվանդների ոչ դեղորայքային կառավարման մեջ (օր.՝ շնչառության հսկողություն, շնչառական տեխնիկաներ, հիվանդի դիրքավորում, միջավայրի կարգավորում): Հետո մասնակիցներից պահանջվում է ցուցադրել հիվանդի հանդեպ խնամք՝ կիրառելով այս հմտությունները: Դասախոսներից Ուենդի Ռեբբը լինելու է հիվանդի դերում</p>	
17:15-17:45	Բուժքույրական դեպքի խորացված ուսումնասիրություն, հիվանդի ամբողջական խնամքը շնչուղիների քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության ժամանակ	Զո Բլակեր
17:45-18:00	Եզրափակում և ամփոփում	
18:00	Փակում	
<p>Օր 2՝ մայիսի 4</p> <p>Նստաշրջան 2՝ Սուր և քրոնիկ ցավի կառավարումը</p>		
09:00-09:15	Նախաբան և օրվա նպատակներն ու ծրագիրը	Քեյթ Գերիշ
09:15-09:40	Հասկանալ ցավի հասկացողությունը, ցավի տեսությունները. դարպասի թեորիան և ցավի ֆիզիոլոգիան	Կարիլ Սկենե
09:40-10:00	Ցավի տեսակները, ախտանիշները և պատճառները. վիսցերալ ցավ, մկան-համակարգային ցավ, ներոպաթիկ ցավ, սուր կայծակնային ցավ, ֆանտոմային ցավ	Ուենդի Ուեբբ
10:00-10:30	Ցավի դասակարգումը. սուր և քրոնիկ Սուր ցավի պատճառները. բնական (ոչ պաթոլոգիական) սպոնտան, տրավմատիկ, պլանային Քրոնիկ ցավի պատճառները. հատուկ տեղակայման՝ օր. քրոնիկ մեջքի ցավ, հոդերի ցավ/օստեոարթրիտ, քրոնիկ նյարդային ցավ. տրիգեմինալ ներալգիա, հիվանդության հետևող քրոնիկ ցավ,	Ուենդի Ուեբբ

	մետաստատիկ քաղցկեղ, ներուլոգիական (համակարգային սկլերոզ)	
10:30-11:00	Ընդմիջում	
11:00-12:00	<p>Գործնական մաս</p> <p>Ցավի գնահատումը չափահասների և երեխաների մոտ՝ նկարագրել ցավը և իմանալ տեղակայումը. դիտարկում, կենսական նշաններ, ցավի գնահատման գործիքներ: Ցավի գնահատումը իշեմիկ հիվանդների մոտ. քրոնիկ մեջքի ցավ, հետվիրահատական ցավ</p> <p>Դասախոս Քեյթ Գերիշը ցուցադրելու է այն հմտությունները, որոնք հարկավոր են հիվանդի ցավը գնահատելու՝ հարցումների միջոցով, դիտարկումներով և կենսական նշանները չափելով, ցավի գնահատման միջազգային աղյուսակը լրացնելով:</p> <p>Դասախոս Զո Բլակերը լինելու է իշեմիկ հիվանդի դերում այս սիմուլյացիոն սցենարի մեջ:</p> <p>Մասնակիցները գնահատելու են հիվանդի ցավը: Ներկայացվելու է երկու սիմուլյացիոն սցենար. մեջքի քրոնիկ ցավով հիվանդ, ինչպես նաև հետվիրահատական ցավով հիվանդ որովայնի վիրահատության նույն օրը: Դասախոսներ Կարիլ Սկենեն և Ուենդի Ուեբբը լինելու են հիվանդի դերում</p>	Քեյթ Գերիշ
12:00-12:30	Ցավի դեղորայքային կառավարումը: Ցավի կառավարման սանդղակ, ցավազրկում և աղյուվանտ թերապիա, կիրառման ձևերը, խմելու միջոցով, ներարկում, ներմաշկային, կաթիլային, ինհալացիոն	Ուենդի Ուեբբ
12:30-13:30	Ճաշի ընդմիջում	
13:30-14:30	<p>Գործնական մաս՝</p> <p>Ցավի ոչ դեղորայքային կառավարումը: Հոգեբանական աջակցություն, շնչառության վերահսկում, հանգստացնել, ինֆորմացիայի փոխանցում, ֆիզիկական թերապիա. ցավի գնահատումը իշեմիկ հիվանդների մոտ, քրոնիկ մեջքի ցավ, հետվիրահատական ցավ</p> <p>Դասախոս Քեյթ Գերիշը ցուցադրելու է այն</p>	Կարիլ Սկենեն

	<p>հմտությունները, որոնք հարկավոր են ցավի ոչ դեղորայքային կառավարման մեջ. հոգեբանական աջակցություն, շնչառության կարգավորում, գիտելիքի փոխանցում, ֆիզիկական վարժություն: Դասախոսներից մեկը՝ Ջո Բլակերը լինելու է իշեմիկ հիվանդի դերում այս սիմուլացիոն սցենարի մեջ: Մասնակիցները ցուցադրելու են ցավի կառավարումը օգտագործելով ոչ դեղորայքային միջոցներ: Ներկայացվելու են երկու սիմուլացիոն սցենարներ. մեջքի քրոնիկ ցավով հիվանդ ինչպես նաև հետվիրահատական ցավով հիվանդ որովայնի վիրահատության նույն օրը: Դասախոսներ Կարիլ Սկենե և Ուենդի Ուեբբը լինելու են հիվանդի դերերում:</p>	
14:30-15:00	Ցավի կառավարումը երեխաների և նորածինների մոտ	Կարիլ Սկենե
15:00-15:30	Ցավի ազդեցությունը ամբողջ անձի վրա՝ մարմին, միտք, սոցիալական, հոգեբանական Ցավի վրա ազդող գործոնները՝ տարիք, սեռ, մշակույթ, ցավի իմաստը, անհանգստություն, քուն/հոգնածություն, նախկին փորձառություն, որոշ գործողություններ, սոցիալական միջավայր	Ջո Բլակեր
15:30-16:00	Ընդմիջում	
16:00-17:00	Բուժքրոյրական դեպքի խորացված ուսումնասիրություն. անձի ամբողջական խնամքը իշեմիկ հիվանդների մոտ, ծննդաբերության ցավ, քրոնիկ մեջքի ցավ, երեխաների որովայնի կայծակնային ցավ	Ջո Բլակեր
17:00	Եզրափակում	
<p>Օր 3՝ մայիսի 5 Նստաշրջան 3՝ Արդյունավետ թիմային աշխատանք</p>		
09:00-09:15	Նախաբան և օրվա նպատակներն ու ծրագիրը	Քեյթ Գերիշ
09:15-10:00	Բուժքրոյրական թիմային աշխատանք: Թիմերի հատկանիշները, տեսակները բժշկական ոլորտում, թիմային աշխատանքի	Քեյթ Գերիշ

	օգուտը, հաջողակ թիմերի բնորոշ հատկանիշները, գործնական ռազմավարություն արդյունավետ թիմ կառուցելու համար	
10:00-11:00	Գործնական Թիմային աշխատանքի հմտությունների վարժություն Թիմային աշխատանքի հմտությունները ուսուցանվելու են սիմուլյացիոն վարժությունների միջոցով, որտեղ մասնակիցները աշխատելու են որոշ հարցերին տալ խմբակային լուծում: Դասախոսական խմբից մեկը հետևելու է յուրաքանչյուր թիմին, որպեսզի գնահատի թիմի արդյունավետությունը առաջադրանքը իրականացնելու մեջ: Մասնակիցներից խնդրվելու է գնահատել նրանց թիմային աշխատանքի փորձը և արձագանքել, թե ինչ սովորեցին թիմային աշխատանքի բարելավման ոլորտում:	Կարիլ Սկենե
11:00-11:30	Ընդմիջում	
11:30-12:00	Սեմինարի գնահատում: Հետագա ծրագրերի պլանավորում	Քեյթ Գերիշ

Թիրախային լսարան՝ բուժքույրեր:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 10-15 հոգի: